ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի
2023 թվականի հուլիսի 18-ի N 98-Լ կարգադրությամբ

ՀԵՌԱՎԱՐ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանումներ	Թվային բանկինգի տնօրինություն, Մանրածախ բիզնեսի գծով տնօրինություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02/09/2023
Այլ դրույթներ	Սույն պայմանները ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել վարչության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N431 - Լ որոշմամբ հաստատված «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմանները»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ 3

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 4. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ 6

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐ 6

ԳԼՈՒԽ 6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ 7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 10

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն հրապարակային պայմանները կարգավորվում են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի և Հաճախորդի միջև Հեռավար բանկային ծառայությունների մատուցման (օնլայն և մոբայլ բանկինգ) համակարգերի օգտագործման հետ կապված հարաբերությունները: Հեռավար բանկային ծառայությունների մատուցման (օնլայն և մոբայլ բանկինգ) համակարգերի օգտագործման միջոցով կնքվող գործարքների նկատմամբ կիրառվում են տվյալ գործարքի համապատասխան պայմանագրով և Բանկի կողմից իր պաշտոնական՝ www.idbank.am կայքում հրապարակված տվյալ գործարքի պայմաններով սահմանված կանոնները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն փաստաթղթում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Բանկ***՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,
2) ***Պայմաններ***՝ Հեռավար բանկային ծառայությունների մատուցման (օնլայն և մոբայլ բանկինգ)համակարգերի օգտագործման հրապարակային պայմաններ,
3) ***Օնլայն բանկինգ***՝ Համակարգչի ինտերնետ հասանելիության պայմաններում, համացանցային տիրույթ մուտք գործելու համար նախատեսված ծրագրի /բրաուզեր/ միջոցով Բանկի հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք /այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ/ կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ:
4) ***Մոբայլ բանկինգ***՝ Idram&IDBank բջջային հավելվածով Բանկի հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք /այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ/ կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ:
5) Բանկի հաճախորդին իր գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման հնարավորություն և/կամ գործարք կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ:
6) ***Համակարգեր***՝ Հեռավար բանկային ծառայությունների մատուցման (օնլայն և մոբայլ բանկինգ) համակարգեր,
7) ***Օգտատեր***՝ Իդրամի էլեկտրոնային փողի համակարգի օգտագործող,
8) ***Հաճախորդ***՝ ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Բանկի հաշվետեր, վարկառու կամ ավանդատու: Ընդ որում՝ սույն կարգում «Հաճախորդ» բառն օգտագործվում

է նկատի ունենալով նաև որպես Օգտատեր, այնքանով, որքանով տվյալ կարգավորումը կիրառելի կլինի Օգտատիրոջ նկատմամբ,

9) ***Գաղտնաբառ՝*** «Իդրամ» ՍՊԸ-ի «էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված գաղտնաբառ,

10) ***PIN կոդ՝*** «Իդրամ» ՍՊԸ-ի «էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված կոդ,

11) ***Հաշվառման հաշիվ կամ «Իդրամ» ID՝*** Հաշվառման ունիկալ իննանիշ թիվ, «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի օպերատորի՝ «Իդրամ» ՍՊԸ-ի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտատիրոջ կամ Ծառայություն մատուցողի անունով բացված և «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի օպերատորի կողմից վարվող/սպասարկվող հաշիվ, որի վրա համալրվում են (լիցքավորվում են) «Իդրամ» միավորները,

12) ***Գործարք՝*** քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացմանը, և/կամ կատարմանն ուղղված գործողություններ /այդ թվում՝ պայմանագրի կնքման ձևով/:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Բանկը Հաճախորդներին տրամադրում է Հեռավար բանկային ծառայությունների համակարգերի միջոցով գործարքներ իրականացնելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվության դիտման, հնարավորություն:

4. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների/գործարքների պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Համակարգերով գործարքների իրականացման հասանելիություն ստանալու համար Բանկը սահմանում է պատշաճ նույնականացման պահանջ: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված պատշաճ նույնականացում է համարվում «Իդրամ» ՍՊԸ-ի «էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված նույնականացումը:

Ընդ որում՝ «Իդրամ» ՍՊԸ-ի «էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված նույնականացման պահանջների միակողմանիորեն կատարված փոփոխությունները /այդ թվում՝ խստացնող/ կիրառելի են Համակարգերի նկատմամբ:

6. Յուրաքանչյուր անգամ Համակարգեր մուտք գործելուց առաջ սահմանված է հավաստագրման պահանջ, որը ենթադրում է Հաճախորդի կողմից իր օգտանվան և

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

գաղտնաբառի, ինչպես նաև PIN կոդի մուտքագրում և ավտոմատ էլեկտրոնային համակարգի միջոցով օգտանվան և գաղտնաբառի նույնականացում:

7. Պայմանները Հաճախորդի կողմից ակցեպտավորված են համարվում էլեկտրոնային եղանակով այն հաստատելու՝ «Համաձայն եմ» դաշտը լրացնելու և «Հաստատել» կոճակի միջոցով:

8. Հաճախորդը սույնով հաստատում և երաշխավորում է, որ Պայմանների ակցեպտավորման պահին գործում է սթափ մտքով, առանց որևէ մոլորության և հարկադրանքի ազդեցության, լիովին հասկանում և գիտակցում է Պայմանների իմաստն ու էությունը, լիովին իրավունակ և գործունակ է, իր նկատմամբ չկա սահմանված խնամակալություն, հոգաբարձություն և պատրոնաժ, ինչպես նաև առկա չէ Պայմանների էությունը գիտակցելուն և ընկալելուն խոչընդոտող հանգամանքներ (հիվանդություն, թմրանյութերի, այլ հոգեմետ նյութերի կամ ալկոհոլի ազդեցություն և այլն), ինչպես նաև հաստատում է, որ իր մոտ բացակայում է Պայմաններն ակցեպտավորելուն հարկադրող պարտականություններ, այն ակցեպտավորում է կամովին՝ իր կամքի ազատ արտահայտությամբ, լիովին հասկանալով և ընդունելով Պայմանների իմաստն ու նշանակությունը և դրանից բխող բոլոր փաստացի և իրավական հետևանքները:

9. Հաճախորդը Պայմաններին համաձայնություն տալով՝ հնարավորություն է ստանում Համակարգերի օգտագործմամբ բացել և տնօրինել հաշիվներ /նաև խնայողական հաշիվ/, քարտի միջոցով կատարել վճարումներ, ներդնել ավանդ և ստանալ տոկոսներ, դիմում ներկայացնել վարկ ստանալու համար, կնքել վարկային պայմանագիր և ստանալ ու տնօրինել վարկը, տրամադրել Անձնական տվյալների մշակման համաձայնություն, տրամադրել ԱՔՌԱ հարցման համաձայնություն, կատարել առկա բոլոր հաշիվներով գործարքներ:

10. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Բանկն իրավասու է միակողմանիորեն փոփոխել Պայմանները, ինչի մասին Հաճախորդը ծանուցվում է Համակարգերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունների միջոցով (push notifications) կամ էլեկտրոնային փոստի կամ Համակարգերի ներքին հաղորդագրություններ բաժնում ներառելու միջոցով: Պայմանների փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես հաղորդագրության ուղարկման պահից և համարվում են Հաճախորդի կողմից ակցեպտավորված:

11. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Համակարգերի օգտագործման նկատմամբ կիրառելի են նաև «Իդրամ» ՍՊԸ-ի «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված կանոնները, ուստի «Իդրամ» ՍՊԸ-ն իրավասու է դրանք միակողմանիորեն փոփոխել «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված կարգով:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

12. Հաճախորդը Պայմաններին համաձայնություն տալով՝ համաձայնում է նաև լրիվ ծավալով գույքային պատասխանատվություն կրել՝ իր օգտահաշվով կնքված գործարքներից բխող պարտավորությունների կատարման համար:

13. Հաճախորդը սույնով գիտակցում և ընդունում է, որ իր անունից կամ իր տվյալների տրամադրմամբ այլ անձանց իր անունից կամ իր փոխարեն կամ իր հաշիվներով գործարք կատարելու հնարավորության ընձեռումը (այդ թվում հաշվի համալրման հնարավորության տրամադրումը) համարվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին տվյալ անձին ծանոթանալու համաձայնության տրամադրում:

ԳԼՈՒԽ 4. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

14. Համակարգերով գործառնությունների իրականացման հասանելիություն ստանալու համար սահմանված նույնականացումն իրականացվում է «Իդրամ» ՍՊԸ կողմից էլեկտրոնային փողի թողարկման եվ սպասարկման հրապարակային պայմանագրի «Օգտատերերի նույնականացման կարգը և պայմանները» բաժնով նախատեսված կարգով և պայմաններով:

15. Սույն պայմանների 14 կետով նախատեսված կարգով և պայմաններով իրականցված Հաճախորդի նույնականացումը համարվում է պատշաճ նույնականացում և բավարար է Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու համար:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐ

16. Պայմանների 6-րդ կետով նախատեսված PIN կոդի մուտքագրումը/կենսաչափական նույնականացումը դիտվում է որպես էլեկտրոնային ստորագրություն և տալիս է Հաճախորդին իր գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և գործարք կատարելու հնարավորություն:

Յուրաքանչյուր գործառնություն /գործարք, դիմում, հանձնարարություն/ Հաճախորդի կողմից կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան դաշտերում գործարքների պայմանները լրացնելու և հաստատելու միջոցով:

Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ սույն կետով նկարագրված էլեկտրոնային եղանակով ստորագրությունը հավասարազոր է և ունի նույն իրավաբանական ուժը, ինչ իր ձեռագիր ստորագրությունը, իսկ էլեկտրոնային եղանակով ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերը առաջացնում են տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող իրավական հետևանքներ:

17. Համակարգերի միջոցով գործարքները կնքված են համարվում Պայմանների 4-րդ գլխով սահմանված կարգով նույնականացում անցած Հաճախորդի կողմից Համակարգերում գործարքի կնքմանն ուղղված համապատասխան քայլերի հերթականության կատարմամբ,

18. Հաճախորդը, Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ PIN կոդը և/կամ գործարքի կատարման համար նախատեսվող հաղորդագրության միջոցով ուղարկվող մեկանգամյա կոդը, և/կամ Համակարգեր մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց համար որևէ ձևով հասանելի դարձնելով (ներառյալ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ PIN կոդը, և/կամ մեկանագամյա կոդը, և/կամ Համակարգեր մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց հասանելի չդառնալու հարցում բավարար հոգատարություն չցուցաբերելու դեպքում), երրորդ անձանց լիազորում է Համակարգերի օգտագործմամբ իր անունից կնքել բոլոր գործարքները (հնարավոր ցանկացած պայմաններով), տալիս է իր համաձայնությունը այդ գործարքներին և ընդունում, որ դրանցով իրավունքներ ու պարտականություններ առաջանում են հենց իր՝ Հաճախորդի, համար:

19. Ընդ որում, գործում է Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ PIN կոդը, և/կամ գործարքի կատարման համար նախատեսվող հաղորդագրության միջոցով ուղարկվող մեկանգամյա կոդը երրորդ անձանց համար Հաճախորդի դրսևորած վարքագծի հետևանքով հասանելի դառնալու կանխավարկածը: Այն բոլոր գործարքները, որոնք սահմանված են «Իդրամ» ՍՊԸ սակագներով, իրականացվում են «Իդրամ» միավորների տեսքով՝ մուտքագրվելով Հաշվառման հաշվին և այնուհետև փոխանցվելով հասցեատիրոջը:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

20. Բանկը գործադրում է լավագույն ջանքերը Համակարգերը և դրանցով կատարվող գործառնություններն/Գործարքները առավել անվտանգ դարձնելու համար: Տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց Բանկը պարբերաբար կատարելագործում է Համակարգերի անվտանգային միջոցները, ուստի նաև իրավասու է ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխել ինչպես Համակարգերի օգտագործման տեխինկական պայմանները, այնպես էլ սահմանել Հաճախորդների կողմից գործառնություն/Գործարքներ կատարելու իրավասություն տրամադրելու և յուրաքանչյուր անգամ գործառնություն/Գործարք կատարելու նույնականացման, հավաստագրման, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրման նոր եղանակներ և պահանջներ: Բանկը և Հաճախորդն ընդունում են, որ Համակարգերի և դրանցով կատարվող

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

գործառնությունների/Գործարքների անվտանգությունը լավագույն ձևով ապահովելու նպատակով հավասարապես օժտված են պարտականություններով: Ըստ այդմ՝ Պայմաններով սահմանվում են պարտադիր կատարման ենթակա Բանկի և Հաճախորդի հետևյալ պարտականությունները.

21. Հաճախորդը պարտավոր է՝

1) Գաղտնի պահպանել Համակարգեր մուտք գործելու համար տրամադրված գաղտնաբառը, PIN կոդը և Գործարքների/գործողությունների հաստատման համար Բանկի կողմից ուղարկվող մեկանգամյա կոդերը:
2) Երրորդ անձանց հասանելի չդարձնել Համակարգերի մուտքի և Գործարքների/գործողությունների կատարման հնարավորությունը: Մասնավորապես՝ ապահովել Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված իրենց տեխնիկական սարքերի /սմարթֆոն, պլանշետ, համակարգիչ և այլն/ ֆիզիկական անվտանգությունը, այդ թվում՝ երրորդ անձանց հասանելիությունը, ինչպես նաև վնասաբեր ծրագրերից պաշտպանությունը:
3) Մուտք գործելու համար տրամադրված օգտանունն ու գաղտնաբառը և Գործարքների/գործողությունների կատարման նպատակով Բանկի կողմից տրամադրվող մեկանգամյա կոդերը երրորդ անձանց հասանելի դառնալու, Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված իրենց տեխնիկական սարքերի կորստի, չարտոնված ներթափանցման դեպքի, ինչպես նաև ցանկացած այլ կասկածելի և ռիսկային դեպքերի ժամանակ անհապաղ տեղյակ պահել Բանկին՝ զանգահարելով (+37410) 59 33 33 հեռախոսահամարով:
   Ընդ որում սույն ենթակետի իմաստով, բացառությամբ Հաճախորդի, երրորդ անձ են համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:
4) «Իդրամ» ՍՊԸ-ի միջոցով նույնականացված լինելու և Բանկի հաճախորդ դառնալու, կամ Բանկի և «Իդրամ» ՍՊԸ-ի հաճախորդ լինելու դեպքում հաշիվների սինքրոնացում կատարելու, ինչպես նաև «Իդրամ» ՍՊԸ-ի ծառայություններից օգտվելու դեպքում պահպանել «Իդրամ» ՍՊԸ-ի «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված անվտանգության կանոնները:
5) Պայմանների, իսկ «Իդրամ» ՍՊԸ-ի ծառայություններից օգտվելու դեպքում նաև «Իդրամ» ՍՊԸ-ի «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հրապարակային պայմանագրով» նախատեսված անվտանգության կանոնների խախտում թույլ տալու դեպքում, հատուցել դրանից բխող Բանկին պատճառված վնասը լրիվ ծավալով, որը մասնավորապես ներառում է իրական վնասը, ինչպես

նաև չստացված եկամուտները, որոնք Բանկը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում Հաճախորդի կողմից իր պարտականությունների խախտում թույլ չտալու դեպքում:

6) Սույն կետի 5-րդ ենթակետում նշված հետևանքների վրա հասնելու դեպքում վճարել Համակարգերի օգտագործմամբ փաստացի կատարված Գործարքով Բանկի առջև ստանձնված պարտավորությունների խախտում թույլ տալու համար նախատեսված տուժանքին հավասար չափով:

22. Բանկը պարտավոր է՝

1) Հաճախորդի կողմից 21-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կարգով արգելափակման անհրաժեշտության մասին հայտնելուց անմիջապես հետո արգելափակել Հաճախորդի Համակարգերը:
2) Ապահովել Համակարգերի անվտանգային միջոցների անընդհատությունը:
3) Գործադրել լավագույն ջանքերը Համակարգերի անվտանգության միջոցների կատարելագործման համար:
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ծավալներով ապահովել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը:
5) Պատասխանել Համակարգերի օգտագործման վերաբերյալ Հաճախորդի բանավոր և գրավոր հարցումներին:

23. Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև Բանկի մոտ Համակարգերի ապօրինի օգտագործման կասկածի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար արգելափակել Համակարգերի հասանելիությունը:

24. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու արդյունքում, ինչպես նաև ոչ իր մեղքով Հաճախորդի կրած վնասների համար:

25. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Պայմաններով նախատեսված պահանջների պահպանումը բխում է իր լավագույն շահից, իսկ դրանց չկատարումը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, ընդհուպ մինչև դրամային պարտավորությունների առաջացման, այդ թվում՝ խարդախությունների կամ զեղծարարությունների հետևանքով առաջացած,որի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

26. Հաճախորդը ծանոթացել է «Բանկային ծառայությունների վերաբերյալ ծանուցումների ստացման հրապարակային պայմաններին» և գիտակցում և ընդունում է, էր

իր կողմից ընտրված ծանուցման եղանակների արդյունքում հաղորդագրությունների չստացման հետ կապված ռիսկը կրում է հենց ինքը՝ հաճախորդը:

27. Հաճախորդը, գիտակցում և ընդունում է, որ Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և PIN կոդը երրորդ անձանց համար հասանելի դառնալու դեպքում գործում է դրանք՝ Հաճախորդի դրսևորած վարքագծի արդյունքում երրորդ անձանց հասանելի դառնալու կանխավարկածը:Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Բանկին՝ Համակարգերի բարելավման և հնարավոր ռիսկերի զսպման, ինչպես նաև խարդախությունների կամ զեղծարարությունների կանխարգելման նպատակով Հաճախորդի կողմից իրականացվող Գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել «Իդրամ» ՍՊԸ-ին, եթե տվյալ Գործարքներն իրականացվել են Համակարգերի միջոցով և Բանկի կարծիքով հարուցում են խարդախության և/կամ զեղծարարության, և/կամ ոչ իրավաչափ, և/կամ ապօրինի գործունեության կասկած:

28. Բանկը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պահպանելով ամենաբարձր էթիկական և կարգավորող չափանիշները՝ պատասխանատու գործունեություն է իրականացնում և երաշխավորում է, որ ոչ Բանկը, ոչ էլ Բանկի ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում կիրառելի միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը/շրջանցմանը:

29. Բանկը, լինելով միջազգային ֆինանսական համակարգի պատասխանատու մասնակից, միևնույն ժամանակ առավել բարձր գնահատելով և պաշտպանելով հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդատությունը՝ հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:

30. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ պատժամիջոցների քաղաքականությունը արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև բանկը կարող է հրաժարվել այդ հաճախորդներին սպասարկելուց:

ԳԼՈՒԽ 7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

31. Հաճախորդը տալիս է իր անվերապահ համաձայնությունը Օնլայն Բանկինգում և/կամ Մոբայլ Բանկինգում՝ Հաճախորդի անձնական օգտահաշվի «Կարգավորումներ» բաժնի «Պայմաններ և դրույթներ» ենթաբաժնում **հրապարակված «Անձնական տվյալների մշակման համաձայնություն»** վերտառությամբ հրապարակային համաձայնությանը, որի

հիմքով Բանկը Համակարգերով իրեն ծառայություններ մատուցելիս կարող է կատարել հետևյալ գործողությունները.

1) մինչև Հաճախորդի՝ Բանկի հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը և այդ իրավահարաբերության ընթացքում Հաճախորդի անձնական և իրեն վերաբերող տվյալները (անուն (հայերեն և անգլերեն), ազգանուն (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն), անձը հաստատող փաստաթղթի տիպ, փաստաթղթի համար, փաստաթուղթը տրամադրող բաժին, հանրային ծառայության համարանիշի առկայություն, հանրային ծառայության համարանիշ, կենսունակության (կենդանի/ մահացած) կարգավիճակ, ծննդյան ամսաթիվ, մահվան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, անձնագրի տրման ամսաթիվ, անձնագրի վավերականության ժամկետ, ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, շենք, տան տեսակ, բնակարան, անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկար) մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել, ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել՝ նույնացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու նպատակով, և այլն, ընդ որում՝ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես Հաճախորդից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից,
2) դիմել ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած անձին և ստանալ Հաճախորդի վերաբերյալ անհրաժեշտ, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող տվյալներ և տեղեկություններ, այդ թվում՝ անուն (հայերեն և անգլերեն), ազգանուն (հայերեն և անգլերեն), հայրանուն (հայերեն և անգլերեն), անձը հաստատող փաստաթղթի տիպ, փաստաթղթի համար, փաստաթուղթ տրամադրող բաժին, հանրային ծառայության համարանիշի առկայություն, հանրային ծառայության համարանիշ, կենսունակության (կենդանի/ մահացած) կարգավիճակ, ծննդյան ամսաթիվ, մահվան ամսաթիվ, սեռ, քաղաքացիություն, անձնագրի տրման ամսաթիվ, անձնագրի վավերականության ժամկետ, ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, շենք, տան տեսակ, բնակարան, անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկար՝ նույնականացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու,

իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու նպատակով:

32. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Բանկի հետ հաստատված իրավահարաբերությունների ընթացքում իր կողմից տրամադրված հեռախոսահամարը Հաճախորդի՝ Բանկում գրանցված անձնական տվյալներից ենթակա է հեռացման հետևյալ դեպքերում.

1) Եթե երրորդ անձը Հաճախորդի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից Բանկի պաշտոնական հեռախոսահամարին զանգահարելու միջոցով տեղեկացրել է, որ տվյալ հեռախոսահամարը իրեն է պատկանում, կամ
2) Եթե երրորդ անձը Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեների, մասնաճյուղերի և/կամ Հեռախոսազանգերի Կենտրոնի միջոցով Բանկ է ներկայացրել Բջջային կապի օպերատորի կողմից տրված տեղեկանք՝ ի հավաստում, որ տվյալ համարը պատկանում է իրեն:

33. Սույն կանոնների 32-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալու մասին Բանկից տեղեկանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պարտավորվում է մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի և/կամ Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնել դիմում հեռախոսահամարի փոփոխություն կատարելու նպատակով, իսկ մինչ փոփոխություն կատարելը, Բանկը դադարեցնում է տվյալ հեռախոսահամարին տեղեկատվության տրամադրումը: Բանկի կողմից 32-րդ կետում նշված հիմքերի մասին տեղեկացնելու համար Հաճախորդի հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում նույն տեղեկատվությունը ուղարկվում է Հաճախորդի գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին:

34. Եթե 32-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալուց հետո 1 ամսվա ընթացքում Բանկի աշխատակցին չի հաջողվում կապ հաստատել Հաճախորդի հետ և/կամ Հաճախորդի կողմից չի իրականացվում տվյալների թարմացում, ապա վերջինիս հաշիվները ենթակա են արգելափակման: Հաճախորդի կողմից տվյալների թարմացում իրականացնելու դեպքում հաշիվներն ապաարգելափակվում են:

35. Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները մշակվելու և օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Բանկի գործունեության նկատմամբ կիրառելի այլ օրենսդրությունների, ՀՀ կենտրոնական բանկի և պետական այլ իրավասու մարմինների իրավաչափ պահանջների, ինչպես նաև Բանկի պայմանագրային պարտավորություններից բխող պահանջների կատարման նպատակով:

36. Հարցված անձնական տվյալները պահպանվելու են անժամկետ՝ նույնիսկ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի հետ իրավահարաբերությունների գործողության ավարտից հետո:

37. Հաճախորդը կարող է ցանկացած ժամանակ պահանջել անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում կամ մշակման դադարեցում, ինչպես նաև կատարել մշակման հետ կապված այլ գործողություններ՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:
38. Հաճախորդը ցանկացած ժամանակ կարող է հետ կանչել իր համաձայնությունը, որի դեպքում Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները հետկանչը ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը պարտավոր է ոչնչացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հաճախորդին անձնական տվյալները ոչնչացնելու մասին:
39. Տվյալները կարող են տրամադրվել Բանկի աշխատակիցներին, ովքեր իրավասու են զբաղվելու տվյալներ մշակմամբ:
40. Տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից կարող են ազդել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:
41. Հաճախորդը գիտակցում է և համաձայն է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները կարող են փոխանցվել «Իդրամ» ՍՊԸ-ին:
42. Տվյալների մշակող է հանդիսանում՝ «ԱյԴի Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 13):

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է